

**ԵՐԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԳՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՈՒ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՒ\***

**Անահիտ Հակոբյան**

Ուսումնասիրությունները վկայում են, որ մամուլը, (առանձնապես նրա էջերում գետեղված երկխոսությունը) հայ ժողովրդի ու գիտության միջև կատարել է կամքջի դեր: Քանզի պատմական փորձի ուսումնասիրությունն իշխանություն է տալիս անցյալի վրա և ուժ՝ դեպի ապագան կողմնորոշվելու համար:

Անդրադարձնալով ևս մեկ կարևոր բնորոշման՝ նշենք, որ մի շարք պարբերական ների խմբագիր-հրատարակիչներ տարրեր արիթմներով ընդգծել են, որ իրենց մամուլը ստեղծելու նպատակների նպատակը հենց «Երկխոսության լուսի» միջոցով հայ ժողովրդի լուսավորության գործին ծառայելն էր. «Օրինակ՝ «Հյուսիսափայլ»-ի խմբագիր՝ Ստ. Նազարյանցը, գրել է, որ իր պարբերականի նպատակը հայի համար օգտակար գիտելիքներ հրատարակելն է: Անսագիրը պետք է գործի ժողովրդի օգտին և օգնի, որ նա սովորի մտածել: «Լուս» պարբերականն իր նպատակը համարել է գիտության ու կրթության նվազումները հայ ժողովրդին մասուցելը: Համանան գաղափարներ են արտահայտել «Ժամանակ», «Բազմավեպ», «Արևելյան մամուլ», «Գիտական շարժում» և շատ այլ պարբերականներ»:[1]

Երկխոսության ուսումնասիրությունը արդի պայմաններում բազմից ապացուցել է, որ այն ոչ միայն գաղափարական, միջմշակութային, միջանվաճական փոխագործություն է, այլ նաև կարծիքների, մոտեցումների օպտիմալ-հրական տեղեկատվություն:

Վերջին տարիներին փիլիսոփայական մտքի պատմության մեջ երկխոսությունն ունեցավ նոր հնչողություն, որն արտացոլվեց գլոբալ հասարակական դաշտում: Զուգահեռելով ժամանակաշրջանը՝ նշենք, որ դեռևս փիլիսոփայական ուսումնասիրությունների ժամանակ և իհման երկխոսությունը դիտվում է որպես ունիվերսալ պայման և ցանկացած իրողության սկզբունք՝ որպես իհմնական, դիալեկտիկական գիտելիքների ժանաչողական մեթոդ (Մ.Պատոն, Վ.Հեգել, Ֆ.Նիշտե, Մ.Բախտին, Վ.Շչուկին, Յու.Լուտման և ուր.):

20-րդ դարի մեծ ու հետաքրքիր մտածողների շարքում առանձնահատուկ է հնչում Մարտին Բուբերի անունը (1978-1965թթ.), ով ստեղծեց այսպես կոչված երկխոսության «անթոլոգիան»: Բուբերի ուսումնասիրության խմելիր փիլիսոփայության, մշակութարանության և հոգեբանության առավել կարևոր խնդիրներն էին: Ըստ նրա՝ փիլիսոփայության իհմնական հասկացությունը երկխոսությունն է՝ բոլոր սահմանների հատման եզրագիծը, այլ կերպ՝ երկխոսությունը 20-րդ դարի դասական թեմաների փիլիսոփայությունն է [2], - նշվում է լիփինցայի գրքում:

Երկխոսության ուսումնասիրությունը երկար պատմություն ունի: Իրականության մեջ նրա հաստատուն սահմանումը տվեցին Սոկրատեսն ու Պլատոնը: Փիլիսոփայական երկխոսությունը սկսվում է դեռևս Դ.Ֆոյերբախից, իսկ նրա մեթոդաբանական

\* Հորդվածն ընդունվել է 06.04.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնը:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Վերլուծությունը պատկանում է հենց Մ.Բուբերին, ով և ֆենոմենալ տարբերակով ներկայացրեց այն՝ նրա բնույթին ու կառուցվածքը մեկ ամբողջականությամբ:

Մ.Բուբերի փիլիսոփայությունը նվիրված է մարդու գոյաբանական խնդրին: Նրա գաղափարաբանության մեջ լինելությունը ներկայացվեց որպես երկխոսություն: Բուբերի փիլիսոփայության կենտրոնական գաղափարը երկխոսությունն է Մարդու և Աստծո, Մարդու և Աշխարհի, Մարդու և Անհատի միջև: Մտածողի տեսանկյան երկխոսությունը ստեղծագործ և փրկիչ է, եթե այն իրականացվում է Աստծո միջնորդությամբ, նրա պատվիրաններով ու սիրով: Մարդու և աշխարհի միջև իրականացվող երկխոսության դեպքում Աստված իրականացնում է իր աստվածային գոյությունը: Արող բանականությունը հուշում է, որ երկխոսության օտարակեզու համարժեքը՝ «դիալոգ», սույն մարդկանց շիման հաղորդակցման ձև չէ, այլ իմաստների շատ ավելի լայն դաշտ ունի. ասոցիացիաների մակարդակում այն «խոսակցության» մասնակիցների քանակական սահմանափակումներ չի դնում: Անհատը կարող է երկխոսել անգամ միայնակ՝ ինքը իր հետ: Այդ դեպքում այն ընդհանուր դիալոգի մի մաս է կազմում և ներկայացնում է ավարտուն ասելիք (երկխոսություն երկնային տիրոջ հետ, ներարգանդային կյանքում մոր և պատի միջև տեղի ունեցող գորոյց և այլն): Ուստի պատահական չէ, որ ժամանակից հոգեբանության հետազոտությունների զգալի մասն էլ ուղղված է հենց մարդու «ներքին դիալոգի» ուսումնասիրություններին: <Ոգեբանական և մանկավարժական գիտություններում նույնպես կարելի է քացահայտել մի շարք ուղղություններ, որտեղ անց են կացնում հիմնարար հետազոտություններ՝ կապված երկխոսության և երկխոսական հարաբերությունների հետ:

Ուսումնասիրելով Բիբերին՝ կարելի է նշել նրա եզակի ինքնատիպության մասին: Իսկ տարբերակելով մյուս փիլիսոփայական աղբյուրներից և փիլիսոփայական հայացքներից՝ կարելի է փաստել նրա յուրօրինակ և «լուսավորչական» մտածող լինելու անհատականության մասին:

Երկխոսությունն իր յուրօրինակ արտացոյումը գտավ նաև այլ փիլիսոփայաների գրվածքներում, հետազոտողների և գիտնականների աշխատություններում, իսկ գործնական իրականացումը՝ սոցիալական, հասարակական և մշակութային ոլորտներում: Երկխոսության փիլիսոփայական խնդիրներն ու վերլուծությունները ներկայացված են Մ.Բախստինի, Մ.Բուբերի, Դ.Զոխանձեի, Ի.Իգմա-տենիկոյի, Մ.Կագամի, Մ.Ֆոմինոյի և այլոց աշխատություններում: Այդ ուսումնասիրությունները շաղկապված են մի շարք հիմնարար, սոցիալ-հումանիտար գիտությունների հետ, որոնք փաստվում են փիլիսոփայական, մշակութային, լեզվական և կրոնական ուսումնասիրություններով:

Եվ պատահական չէ, որ անգամ երկխոսությունն իր սկզբունքներով երբեմն հատում և դուրս է գալիս իր սահմաններից՝ անցում կատարելով մեկ այլ՝ քաղաքական երկխոսական դաշտ: Եվ ոչ միայն քաղաքական, այլև հասարակական, սոցիալ-մշակութային դաշտում գործող երկխոսական համակարգը: Եվ այդ երկխոսական համակարգն էլ կարող է ընկալվել որպես համընդհանուր, յուրօրինակ տրամախոսություն, որպես ամբողջական սուբյեկտ իր առանձնահատուկ մտածողությամբ և վարկածով (այս առումով, ի տարբերություն Հեգելի, Բիբերին այլ հիմնավորումներ է տալիս): Վաղիմիր Բիբերը, (1918-2000) լինելով փիլիսոփա, տրամախոսության և մշակութային երկխոսության հեղինակ և մարքսիստական հայացքների տեր, իր փիլիսոփայական աշխատանքի գրառման ընթացքում անգամ ուղիներ էր փնտրում վերակենդանացնելու «Ճշմարիտ Մարքսին»: Բիբերը ստեղծեց փիլիսոփայական տրամախոսության միանգամայն ինքնատիպ գաղափար, որի հիմքում ընկած էր մարդկային մտքի երկխոսական բնութագիրը, որը տանում էր դեպի սահմանափակ տրամախոսական հիմնա-

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

վորման: Ի տարբերություն արդի փիլիսոփայական մտքի (XVII-XIX դդ.- Դեկարտ, Կանտ, Ֆիլիստ, Հեգել), ովքեր իրենց տեսնում էին որպես գիտությամբ գրաղվողների և ճանաչողական մտքի արդարամիտ մտածողների, փիլիսոփայական միտքը 20-րդ դարում, ըստ Բիբլերի, դարձավ ինքնակառավարման և ինքնադրսակարգման հնարավորություն [3], - կարողում ենք Բիբլերի «Шկոլы дивного культа» գրքում:

Երկխոսության հետազոտության տեսական և մեթոդական հիմքը գիտական սկզբունքն է, որը կիրառվում է գաղափարական, սոցիալ-քաղաքական, մշակութային պրոցեսների ուսումնասիրություններում, ինչպես նաև գիտական մոտեցումները, որոնք կապված են ընտրված խնդրի յուրահատկությունների հետ: Արդի ժամանակահատվածում քաղաքական երկխոսության վերլուծության համար կիրառելի դարձան գիտական սկզբունքները: Եվ պատահական չէ, որ քաղաքափառությունը և երկխոսությունը, կանգնած լինելով կողք կողք, դիտարկվեցին որպես ճանաչողության և ընթանանան գործընթաց: «Գործընթաց, որի ժամանակ քաղաքական սուբյեկտները հրապարակ արտահայտեցին իրենց հայացքները, կարծիքները, մոտեցումներն ու գնահատականները (ժրագրերի մշակում, քաղաքական գործունեության և մրցակցության մեխանիզմներ և կամոններ, համաձայնության դրսևորում մյուս սուբյեկտների հետ)»: Ահա այս սահմանումից ստացվում է, որ հենց երկխոսության ընթացքում են լուծվում քաղաքական հարթություն մուտք գործած բոլոր խնդիրներ՝ սեփական մոտեցումների և հայացքների տարածքում, իրավանացվում ժրագրերի, քաղաքական մրցակցության մեխանիզմների՝ խաղի կանոնների մշակում, քաղաքական մյուս սուբյեկտների հետ համաձայնության հաստատում:

Երկխոսության ուսումնասիրության շուրջ հասարակագետներն անգամ այլ մոտեցում են արձանագրել: Մոտեցման համաձայն՝ նրանք առանձնացրել են երկխոսության լոյալ և ոչ լոյալ գործելառութեր: Լոյալ գործելառությունը մասնակիցը փաստարկները կենտրոնացնում է իր օգտին՝ այն համակարգելով և կառուցելով օբյեկտիվ հիմքերի վրա, վեր հանելով և ներկայացնելով հակառակորդի փաստարկների խոցելի կողմերը: Ոչ լոյալ գործելառությունը հետևող խուսափում են դիալոգի առարկայի մասին խոսելուց, վիրապորանքներ ու անձնական բնորոշումներ են տալիս, սպառնում դադարեցնել ծավալված երկխոսությունն ու հաշվեհարդար տեսնում հակառակորդի նկատմամբ: [4]

Անհրաժեշտ է երկխոսության ժամր դիտարկել որպես երկխոսության համակարգված ժամր մամուլում տեղ գտած նյութերում, որն էլ պետք է կրի կոնկրետ ժամրի առանձնահատկություններ: Երկխոսությունը հունարենից թարգմանարար նշանակում է գրուց երկու կամ ավելի մարդկանց միջև, շփում, փոխհամագործակցության գործընթաց: Այն ներառում է սուբյեկտների միջև գիտելիքների մետաֆիզիկական մակարդակների միասնության կապ:

Դիալոգային փոխհարաբերությունները ենթադրում են լեզու, բայց լեզվական համակարգում չեն, որ դրանք ապրում են, այլ մշակութային, սոցիալական այլ ֆենոմեններում:

Ըստ ցանցում տեղ գտած «Արդարականացում» բաժնի Հրազ Գալստյանի հեղինակությամբ «Ի՞նչ ենք անվանում երկխոսություն» հոդվածի՝ «Դիալոգի» բնորոշ տարրը նրա կառուցվածքն է: Դիալոգին (առանձնապես քաղաքական) անհրաժեշտ են՝

1. օպոնենտ սուբյեկտներ, ովքեր առաջարկում են տեսակետներ, լուծումներ, և քննադրատում են հակառակորդների մոտեցումները,

2. լսարան, մարդիկ, որոնց ներկայությամբ և ընթանում է դիալոգը,

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

3.զանգվածային հաղորդակցության ձևեր ու միջոցներ, որոնց միջոցով մասնակիցների ասելիքը փոխանցվում է միայնանց և լսարանին: [5]

Հայտնի է, որ մարդկությունը դիալոգային ձևերի, գործիքների ձևաչափերի հարուստ փորձ ունի (որի վառ օրինակն է բանավեճը): Դիալոգի առանձին ձև կամ տարր են բանակցությունները: Համաշխարհայնացման համատեքստում երկխոսությունը երթենս դուրս է գալիս իրականության սահմաններից՝ տարածության մեջ ընդգրկելով անձանց, տարբեր քաղաքական, կրոնական, փիլիսոփայական մոտեցումներ, միավորներով նրանց մեկ նպատակաւորդվածության շուրջ, որպեսզի լուծվեն տարբեր ազգերի և ժողովուրդների համանարդկային խնդիրները՝ դրանով իսկ հատելով քաղաքական սահմանները: Հեղինակային իր գրքում դրան է անդրադարձել գրական բանավեճների մեջնարան, ԵՊՀ դասախոս Դավիթ Պետրոսյանը: Ըստ նրա՝ «Գոյության խորհուրդը հազարամյակներ շարունակ հուզել և հուզում է մարդուն: Ո՞վ է ինքը, որտեղից է գալիս, ու՞ո՞ւ է գնում: Առաջին իսկ հարցերը հաղորդակցության պահանջ են առաջ բերել՝ մոներվ նրան գրուցի, երկխոսության (տրամախոսության) իր նմանի հետ: Կարծիքների համադրությանն ի սկզբանե ուղեկցել է նրանց հակադրությունը: Վերջիններին բախումը ծննդ է վեճ: Մշակույթի և քաղաքակրթության պատմության մեջ վեճի դերն անփոխարինելի է: Մշակույթի զարգացումն իր մեջ նաև ինքնաժինատման որոշակի գործընթաց է ներառում, որի ընթացքում նոր ձևեր կերտելու մղումը հաճախ իրականություն է դառնում իհնը մերժելու միջոցով: Վեճի դրսևորման շրջանակները, սակայն, սրանով չեն սահմանափակվում, քանզի հաղորդակցության հնարավորություններն անսահման են: Հանրույթ ծևափորող մարդկային կարույցի տարամետ մղումները, նրանում ընթացող հասարակական, քաղաքական ու տնտեսական հարաբերությունների մերհակ բնույթը հաճախ պայքարի ու հակագրեցության ալիք են բարձրացրել»:[6]

Երկխոսությունը նաև փիլիսոփայական երևույթի և ժամանակակից քաղաքականության դիմամիկ արժեքների վերլուծությունն է, որը նպատակաւորդված է համախմբելու համաշխարհային հանրության ուժերը՝ հիմնված փոխադարձ հարգանքի և ձանաչողության վրա, որոնք էլ հենց մուտք են գործում երկխոսության համակարգ: Աշխարհակայմացման պայմաններում երկխոսությունն այսպես կոչված գինադադարի առաքելություն է իրականացնում, որը ոչ միայն նպաստում է հարաբերությունների կարգավորմանը, այլև ծևափորմանը՝ միջազգայինի ներարմամբ:

Երկխոսությունը կարևոր նախապայման է կառուցողական համագործակցության համար և խթանից գործոն՝ կանխելու առձակասումը՝ պայմանավորված պատմական անցումային ժամանակաշրջանում արագ աճող հակամարտություններով:

Այս առումով անդրադարնալով մարտական թերթերին՝ հարկ է նշել, որ դրանք հսկայական տեղ էին հատկացնում կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կարևորագույն որոշումներին՝ տպագրելով դիվանագիտական նույտաներ, ռազմաճակատների հրամանատարության փաստաթղթեր սովետական ինֆորմյուլոյի հաղորդագրություններ, սովետական թիկունքի հերոսական աշխատանքը բնութագրող նյութեր, հանրապետությունների կոմկուսների Կենտկոմների պաշտոնական գրություններ ու կոչեր, նաևնակներ ու դիմումներ՝ ուղղված զրամասերին, ինչպես նաև դրանց պատասխանները՝ թիկունքի աշխատավորներին:

Հենց այս դաշտում էլ իրականացվում էր առողջ երկխոսություն: Արցախի գինավորական լրագրության մեջ զետեղված երկխոսական հողվածներում և նյութերում ևս հեղինակ-գինլրագրողները փորձել են ցույց տալ հայ գինվորի, մարտիկի և վերջապես մարդու անկուտրելի ոգու վեհությունն ամբողջության մեջ, նրա սերը, ցավն ու տառապանքը, մաքառումը, գինվորյալ ժողովրդի մեծ սիրանքը՝ ժամանակի հիշարժան իրա-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

դարձությունների և, հատկապես, արցախյան համահայկական ազատագրական շարժման համապատկերում:

Չուզահեռներ գծելով և համեմատականներ անցկացնելով խորհրդային տարիների և նորօրյա արցախյան մամուլի հետ՝ հարդ է նշել այն ընդհանրությունը, որ պատերազմը նոր խնդիրներ էր դնում թերթերի, հատկապես զինվորական թերթերի առջև։ Գլխավոր քարոզությունն իր ուշադրության վենտրոնում էր պահում մամուլի գործունեությունը։ Կարևոր հրահանգները թերթերը կատարում էին անվերապահորեն։ Մարտական կյանքը նոր հարցեր էր առաջարուում և երկխոսության զուգակցմամբ դրանք հարստացնուում էին թերթերի խորագրերը։

Եվ պատահական չէ, որ անգամ Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում լույս տեսած Հայկական զինվորական թերթերը կարևոր աղբյուրներ էին, որոնց նյութերը երկխոսության ուղեկցությամբ ցուց էին տալիս Հայ ժողովրդի մարտական բարեկամությունը Սովետական միության մոտ ազգերի հետ, Հայկական ազգային զորամասների կազմավորումն ու դրանց մատական գործողությունները։ Այդ թերթերը հայ ժողովրդի զավակների ռազմական սիրագործություններն ստարեգործություններն են և դրանց ուսումնասիրնամ պրոպագանդման գործը կարևոր նշանակություն ունի նաև այսօր։

Երկխոսությունը, գորբակացման համատեքստում ընդգրկելով նաև ազգային մշակույթի հետաքրքրությունները, «տեսական ըմբռնման» դաշտից տեղափոխվեց գործնական դաշտ։ Քանզի լրագործյան հենց այդ տեսակն է ի գորու համախմբելու տարրեր քաղաքական շահերից ծևավորվող ուժերի և հայացքների՝ կուսակցությունների՝ ռազմավարական և մարտավարական նշանակություն ունեցող սկզբունքներն ու դերակատարությունը։ Թերևս սոցիալական խնդիրների լրագործյունը ժուռնալիստիկայի այն տեսակներից է, որն էլ հենց ԶԼՄ-ները դարձնուում է չորրորդ իշխանություն Դավիթ Ալվերյանը։ [7]

Կրկին անդրադարնալով երկխոսությանը՝ նշենք, որ այն նաև համատեղ մտածելու արվեստ է։ Այն ասես ներպարփակ մի մարմին է՝ բաղկացած աչքից ու հոգուց։ և եթե երկխոսության «աչքը» կենցաղի ու ֆիզիկականի համար է, նայելու և նկատելու համար, ապա երկխոսության «հոգին»՝ տեսնելու, ներթափանցելու։ Այդ տեսանելիությունն էլ առավել ակնարու էր առանձնապես Հ. Մայամի «Երկխոսություն երրորդի համար» գրքում, որտեղ իրար են միահյուսված գրական տարրեր ժանրեր՝ հուշագրություն, խոհագործություն, ակնարկ, դիմանկար, նովելատիպ պատումներ, վերլուծություններ։ Մայամական ոգով ներշնչված երկխոսության կենսապատումը համեմված է բնականությամբ՝ «Ես աշխարհում համարյա ոչիմ չգիտեմ» վերտառությամբ։ Հակադրվելով և մերձենալով մարդ-անհատի և ինքն իր եսին՝ նա երկխոսում է։

«Ես գիտեմ ՄԱՐԴՈՒ։

Ես գիտեմ մարդու բոլոր բուլությունները և նրա ուժը՝ նոյնապես։

Գիտեմ նրա բոլոր ձգուումները։

Գիտեմ այդ ձգուումների բոլոր շարժառիթները։

Գիտեմ նրա խոսքն ու խոսքի տակ թաքնված լրությունը։

Գիտեմ նրա լրությունն ու լրության տակ թաքնված խոսքը։

Գիտեմ նրա բոլոր գաղտնիքները։

Գիտեմ և գուցե հենց այդ պատճառով էլ սիրում եմ, հարգում եմ, աստվածացնում եմ նրան, խոնարհվում նրա առջև։

Ես արվեստում ոչնչով չեմ ուզում գրադարձել, բացի մարդուց։

Ես ոչ ոքի համար չեմ ստեղծագործում, բացի մարդուց։ [8]

## **ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015**

Այս համատեքստում երկխոսությունը նաև բարի կամեցողության ուղի է և այդ առաքելությունն իրականացնող գործոն:

Այսպիսով՝ դիալոգը քաղաքակրթության համակարգող հետաքրքրությունների իրականացումն է, կազմակերպությունների ունեցած շահերի իրականացման մայրուղին: Անհրաժեշտ է մշակել մասնագիտական երկխոսության հայեցակարգային այնպիսի դրույթներ, որոնք կասմաննեին երկխոսության հարաբերությունները ժամանակակից հումանիտար գիտությունների միջև (փիլիսոփայություն, հոգեբանություն) և կրացահայտեին երկխոսությունը՝ որպես համալիր խոսքի նկարագիր և առանձնահատուկ տեքստային կատեգորիա:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Աքրահամյան Ս.Վ., Մամուլը շրջիկ դպրոց է, Եր., 1996, էջ 4:
2. Լիֆինցևա Տ.Պ., Диалог структура бытия в религиозном экзистенциализме Мартина Бубера M (1978-1965), М., 1989, стр. 2.
3. Основы программы Школы диалога культур, Автор: Библер В.С. Публикация, вступительная заметка и комментарии И.Е. Берлянд, Публикация, вступительная заметка и комментарии И.Е. Берлянд, Несколько слов о библеровской диалогике, концепции Школы диалога культур и ее Программе, М., 1989, стр.1
4. <http://prm.am/?p=2492>
5. Նույն տեղում:
6. Պետրոսյան Դ.Վ., Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում, Եր., 2007, էջ 9:
7. Սոցիալական խնդիրների ժուռնալիստիկա, ուսումնական ուղեցույց, Եր., 2013, էջ 5:
8. <http://www.magaghat.am/tag>

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Երկխոսությունը որպես կառուցողական համագործակցության  
նախապայման ու կարևոր գործոն  
Անահիտ Չակոբյան**

Հոդվածում նշվում է, որ երկխոսության զարգացման ուսումնասիրությունը արդի պայմաններում բազմից ապացուցել է, որ այն ոչ միայն գաղափարական, միջնշակութային, միջանվանական փոխազդեցություն է, այլ նաև կարծիքների, մոտեցումների օպտիմալ-իրական տեղեկատվություն:

Երկխոսության հետազոտության տեսական և մեթոդական հիմքը գիտական սկզբունքն է, որոնք կիրառվում են գաղափարական, սոցիալ-քաղաքական, մշակութային պրոցեսների ուսումնասիրություններում:

**Բանալի բառեր՝** դիալոգ, անթոլոգիա, բանավեճ, տրամախոսություն, չորրորդ իշխանություն, երկխոսության դուռ, լրատվադաշտ, գոյարանական խնդիր, հանրույթ, լոյալ գործելառք:

**РЕЗЮМЕ**

**Диалог как необходимое условие и важный фактор конструктивного сотрудничества**  
**Анаит Акопян**

В статье отмечается, что изучение развития диалога в современных условиях, многократно доказывало, что это не только идеологическое, культурное взаимодействие, но оптимально реальная информация об отношениях и мнениях.

Основа теоретического и методологического исследования диалога – это научный принцип, который применяется в идеологических, социально-политических, культурных исследованиях.

**Ключевые слова:** диалог, антология, спор, логическая речь, четвертая власть, врата диалога, информационное поле, существенный вопрос, общество, лояльное поведение.

**SUMMARY**

**Dialogue as a Necessary Condition and Important Factor of Constructive Cooperation**  
**Anahit Hakobyan**

In article it is noted that studying the development of dialogue in modern conditions repeatedly proved that this not only ideological, cultural interaction, but is optimum - real information on the relations and opinions.

The basis of theoretical and methodological research of dialogue is a scientific principle which is applied to ideological, socio-political, cultural researches.

**Keywords:** dialogue, ontology, dispute, logical speech, fourth estate, dialogue gate, information field, vital issue, society, loyal behavior.